



«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի առցանց վարկային հայտի լրացման ուղեցույց

Այժմ ՖԻՆՔԱ-ի վարկերի համար դիմելիս պարտադիր չէ մոտենալ մասնաճյուղ: Մինչև 500 000 ՀՀ դրամի վարկի համար կարող եք դիմել առցանց՝ այցելելով www.ola.am էջը համակարգչից, պլանշետից կամ հեռախոսից: Հայտի լրացումը բաղկացած է հետևյալ պարզ քայլերից.

1. Ընտրեք անհրաժեշտ գումարի չափը և վարկի ժամկետը:

Ընտրելուց հետո «Ձեր վարկի պայմանները» բաժնում կարող եք ծանոթանալ նախընտրած վարկի հիմնական պայմաններին:

2. Ընտրեք այն մասնաճյուղը, որտեղ սպասարկվում եք կամ կցանկանայիք սպասարկվել:

3. Լրացրեք Ձեր անձնական տվյալները և ընտրեք հաճախորդի կարգավիճակը:

Աստղանիշով նշված դաշտերի լրացումը պարտադիր է: Տեքստային դաշտերը պետք է լրացնել հայատառ, իսկ հեռախոսահամարը՝ համապատասխան դաշտում ցուցադրված ձևաչափով:

4. Ներբեռնեք անձը հաստատող փաստաթղթերը

Որպես անձը հաստատող փաստաթուղթ կարելի է ներկայացնել.

- սովորական նմուշի անձնագիր և սոցիալական քարտ, կամ
- նույնականացման քարտ:

ՀՀ ոստիկանությունում, Ազգային անվտանգության ծառայությունում, Պաշտպանության նախարարությունում և Արտակարգ իրավիճակների նախարարությունում աշխատելու դեպքում անհրաժեշտ է նաև ներկայացնել ծառայողական վկայական:

Եթե հայտը լրացնում եք տեսախցիկ ունեցող սարքով (սմարթֆոն, պլանշետ), կարող եք անմիջապես լուսանկարել և վերբեռնել փաստաթուղթը՝ սեղմելով վերբեռնման նշանը:

Կարևոր է կցել փաստաթղթերի բոլոր պահանջվող էջերը, մասնավորապես.

- **Անձնագիր**՝ անձնական տվյալների, նկարի, վավերականության և հաշվառման հասցեի էջերը (2–4 էջեր),
- **Նույնականացման քարտ**՝ քարտի երկու կողմերը,
- **Ծառայողական վկայական**՝ անձնական տվյալների և պաշտոնի անվանման էջերը:

Գործընթացն արագացնելու նպատակով, խնդրում ենք համոզվել, որ կցվող ֆայլերն ամբողջական են և ընթերցելի:

5. Ծանոթացեք անձնական տվյալների պահպանման և օգտագործման պայմաններին՝ հետևելով հղմանը, և տվեք Ձեր համաձայնությունը՝ կատարելով նշում համապատասխան վանդակում:

6. Սեղմեք «ԴԻՄԵՆ» կոճակը:

Առցանց դիմելուց հետո մեր աշխատակիցը կապ կհաստատի Ձեզ հետ առավելագույնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում: